ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* 1985 թվականի դեկտեմբերի 6-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի $124^{7}$-րդ հոդվածում`

1.վերնագրում և 1-ին պարբերությունում «տուրքը» բառը փոխարինել «վճարը» բառով:

2.լրացնել նոր պարբերությամբ`

1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետեւ` Օրենսգիրք) $124^{7}$-րդ հոդվածի վերնագրում եւ նույն հոդվածի 1-ին մասում «տուրքը» բառը փոխարինել «վճար» բառով:

2. Օրենսգրքի $124^{7}$-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ.

«Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տուգանք կարող է նշանակվել ամսական առավելագույնը չորս անգամ:

Ձեռնարկատիրական գործունեության նպատակով ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի կայանատեղիում կայանելու համար օրենքով սահմանված տեղական վճարը չվճարելը առաջացնում է տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի չափով:

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: